



for a living planet®

WWF Armenia

Tel: +374 (10) 58 89 83

+374 (10) 54 61 56

Fax: +374 (10) 58 89 83

11/1Proshyan Str.

Yerevan 0019

Armenia

office_am@wwfcaucasus.org

www.panda.org/armenia

12 մայիսի 2017

Մասնագիտական կարծիք

Հայաստանում Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի

ՇՄԱԳ-ում և դրա հավելվածներում ներկայացվող

կենսաբազմազանության և կենսաբազմազանության փոխհատուցման

վերաբերյալ

1. Ամուլսարի ոսկու հանքի տարածքում առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ: Բացահանքի և դրան կից կառույցների շահագործումը հանգեցնելու է այդ տեսակների ապրելավայրերի կորուստի կամ առնվազն վատթարացմանը և անխուսափելիորեն կրճատելու է դրանց թվաքանակը: Այդ հանգամանքը հակասում է ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի, ՀՀ Կենդանական աշխարհի մասին և ՀՀ Բուսական աշխարհի մասին օրենքներին և այլ հոդվածների դրույթներին:


ա) ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 26-ը սահմանում է ընդերքօգտագործման արգելման հիմքերը՝

Ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ազգային անվտանգության ապահովման, մարդկանց կյանքի եւ առողջության, պատմամշակութային արժեքների կամ բնության եւ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից, եթե հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան՝

- 1) գերեզմաններ.
- 2) բնության, պատմության եւ մշակույթի հուշարձաններ.
- 3) Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաեւ եթե տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ:

President: HE Chief Emeka Anyaoku
Director General: Mr James P. Leape
President Emeritus:
HRH The Duke of Edinburgh
Founder President:
HRH Prince Bernhard of the Netherlands

Registered as:
WWF-World Wide Fund For Nature
WWF-Fondo Mondiale per la Natura
WWF-Fondo Mundial para la Naturaleza
WWF-Fonds Mondial pour la Nature
WWF-Welt Natur Fonds
Also known as World Wildlife Fund



բ) ՀՀ Կենդանական աշխարհի մասին օրենքի հոդված 18-ը սահմանում է՝

Բնական պաշարներն օգտագործողները, որոնք տնտեսական կամ այլ աշխատանքների ընթացքում վնաս են հասցնում Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիներին, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար:

Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը եւ դրանց ապրելավայրերի վատթարացմանը:

գ) ՀՀ Բուսական աշխարհի մասին օրենքի հոդված 17-ը սահմանում է

Հողօգտագործողները, որոնց տարածքներում աճում են Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Արգելվում է ցանկացած գործունեություն, որը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց աճելավայրերի վատթարացմանը:

2. ՇՄՍԳ-ում, կենսաբազմազանության ուսումնասիրություններում և կենսաբազմազանության փոխհատուցման միջոցառումներում՝ հավելված 11 բավարար ուշադրության չեն արժանացել ՀՀ Կարմիր գրքում գրանցված մի շարք տեսակներ:

Ջրասամույրը (*Lutra lutra*, VU) և **Շելկովնիկովի կուտորան** (*Neomys schelkovnikovi*, EN) հանդիպում են Արփա և Որոտան գետերի ավազաններում, կուտորան կարող է բնակեցնել փոքր գետերը և առվակները:

Անբավարար են ուսումնասիրվել **բեզուարյան այծի** (*Capra aegagrus*, VU) ապրելավայրերը Արփա գետի ձախ ափին գտնվող բեզուարյան այծի ապրելավայրերը և հանքի շահագործման հնարավոր ազդեցությունները այդ տեսակի ապրելավայրերի և թվաքանակի վրա:

Տարածքում հնարավոր է նաև **սիրիական սխտորագորտի** (*Pelobates syriacus* VU) առկայություն, որը բավարար չի ուսումնասիրվել:

Բաց հանքի շահագործումը լիովին վերացնելու է տարածքում հանդիպող **օձերի** հետևյալ տեսակների ապրելավայրերը. Հայկական իժ *Vipera* (*Montivipera raddei*, VU), անդրկովկասյան սահնօձ (*Zamenis hohenackeri*, VU), հայկական լեռնատափաստանային

իծ (*Vipera (Pelias) eriwanensis*, VU), կովկասյան կատվաօձ (*Telescopus fallax*, VU): Այս կենդանիները հնարավորություն չեն ունենալու տեղափոխվելու այլ ապրելավայրեր և տարածքում առկա դրանց պոպուլյացիաները ոչնչացվելու են՝ ծանր տեխնիկայի, շինարարության և այլի հետևանքով: Կենսաբազմազանության փոխհատուցման միջոցառումները չեն նախատեսում որևէ միջոցառում նշված տեսակների վերաբերյալ:

Հանքի շահագործման արդյունքում ազդեցություն կրող տարածքի **թռչնաֆաունան** բանական հարուստ է, այն ներառում է թռչունների 137 տեսակ, որոնցից 30–ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Կենսաբազմազանության փոխհատուցման հավելվածում՝ հավելված 11, նշվում են միայն ԲՊՄՄ Կարմիր ցուցակի 14 տեսակ: Փաստաթղթում ասվում է “Հատուկ ուշադրություն է դարձվել գորշ արջի և ձվադրող թռչունների պոպուլյացիաների համար անհրաժեշտ նկատառումներին...” (էջ 17-18): Սակայն Աղյուսակ 2-ում նշվում է միայն մեկ տեսակ՝ Տափաստանային հողմավար բազե (*Falco naumanni*), որի համար որպես փոխհատուցում առաջարկվում է միայն մոնիթորինգ՝ 200,000 USD գումարով: ՀՀ Կարմիր գրքում գրանցված այլ թռչնատեսակների փոխհատուցման միջոցառումները բացակայում են:

Ըստ նույն հավելվածի “...Այլ տեսակների պոպուլյացիաների վրա **մնացորդային էական ազդեցություններ չեն ակնկալվում**, որը պայմանավորված է կամ այն հանգամանքով, որ **դրանք տեղակայված են ծրագրի ազդեցության գոտուց դուրս** կամ, որ **դրանք կարող են դիմակայել ակնկալվող ազդեցություններին**“: “Էական ազդեցություններ” արտահայտությունը անորոշ է, “ազդեցության գոտուց դուրս” արտահայտությունը հակասում է հավելվածներ 3 և 4-ում բերվող փաստերին, իսկ “կարող են դիմակայել ակնկալվող ազդեցություններին” պնդումը որևէ թռչնատեսակի համար չի հիմնավորվում որևէ կոնկրետ փաստով:

Բացի ՇՄԱԳ-ի փաստաթղթից, ուսումնասիրվել են դրա հավելվածներ 3 և 4-ը, ինչպես նաև “Natural and Critical Habitat Assessment for Amulsar, Armenia” (Jo Treweek, Pete Carey, Peter Adriaens and Bill Butcher, 2016) հաշվետվությունը (այսուհետ՝ NCHAA):

Հավելվածներ 3 և 4-ում և NCHAA-ում միգրացիա կատարող թռչնատեսակների և բնադրող թռչունների թվաքանակները (տեսակների և անհատների թվաքանակներ) համեմատվում են Վրաստանում՝ Բաթումի ստացված տվյալների և տեսակների համաշխարհային պոպուլյացիաների կամ կուտակումների տվյալների հետ (էջ 6, 33 հավելված 3, և էջ 30-31՝ NCHAA): Թեև նման համեմատությունները ընդհանուր առմամբ կարող են օգտակար լինել, սակայն Ամուլսարի հանքի ծրագրի առումով դրանք անտեղի/անիմաստ են, քանի որ ստեղծում են թյուր կարծիք թռչնատեսակների համար գլոբալ առումով տարածքի ոչ այնքան մեծ կարևորության մասին: Մինչդեռ ստացված տվյալները պետք է դիտարկվեն ազգային մակարդակում և այդ պարագայում հանքի շահագործման հետևանքով թռչնաֆաունայի կորուստները զգալի կլինեն: Հիմնական

շեշտը պետք է դրվի այդ տեսակների պապուլյացիաների կարևորությանը և հնարավոր ազդեցություններին ազգային մակարդակում:

Մինևույն ժամանակ փաստաթղթերում գնահատումները, վերլուծությունները և եզրակացությունները կատարվել են ըստ առանձին տեսակների: Մինչդեռ ընդհանուր պատկերի և բացասական ազդեցության գնահատման համար պետք է գնահատել բոլոր տեսակների և դրանց պոպուլյացիաների ամբողջ համալիրը՝ գնահատելով բոլոր տեսակների անհատների թվաքանակները, որոնք կանհետանան ազդեցություն կրող տարածքներից:

NCHAA-ի էջ 32 –ում նշվում է որ գիշանգղի (*Neophron percnopterus*, EN) Հայաստանյան պոպուլյացիան կազմում է 50-55 զույգ: Այս թիվը որևէ հիմնավորում չունի, մինևույն ժամանակ անտեսվում է գրականության ցանկում բերվող ՀՀ Կարմիր գրքում նշվող 40-60 բնադրող զույգ թիվը: Նման չհիմնավորված թվեր են բերվում նաև այլ թռչնատեսակների համար:

Անհասկանալի է, ինչու են գհանատվել միայն գիշատիչ թռչունները և չեն գնահատվել Ամուլսարի տարածքի ազգային մակարդակում վտանված այլ թռչնատեսակները, որոնք գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՇՄԱԳ-ի համար հիմք են հանդիսացել նշված հավելվածներ 3 և 4-ը և NCHAA-ն: Հետևաբար նույն անճշտությունները, բացթողումները և հակասությունները կարելի է նշել ՇՄԱԳ-ի փաստաթղթի համար՝ էջ 248-249, 619-620, աղյուսակներ 5.7.2., 5.7.6: Օրինակ՝ փաստաթղթում մի քանի անգամ կրկնվում է, որ գիշանգղի բնադրող զույգը ազդեցություն կրող տարածքում սնունդ հայթայթելու համար անցկացնում է իր ընդհանուր ժամանակի 20%-ից պակաս ժամանակը և հետևաբար տարածքն այնքան էլ կարևոր չէ տեսակի համար՝ էջ 645: Այս պնդումն չունի որևէ գիտական հիմնավորում:

ՇՄԱԳ-ում կրկնվում է նաև մեկ այլ թուր պնդում, որ “Օրագրի հետ առնչվող հողօգտագործման փոփոխությունները և խախտումները կազդեն տարբեր թռչնատեսակների վրա, սակայն **չատերը, լինելով համեմատաբար տեղաշարժվող և հարմարվող, կկարողանան տեղափոխվել այլընտրանքային տարածքներ**”՝ օրինակ աղյուսակներ 5.7.7 և 5.7.8: Այս պնդումն անհիմն է և անիրատեսական, քանի որ գոյություն չունեն ազատ “այլընտրանքային տարածքներ”: Եթե մոտակայքում նույնիսկ առկա են այդ տեսակի համար հարմար տարածքներ, ապա դրանք արդեն իսկ զբաղեցված են լինում նույն այդ տեսակի կողմից: Եթե բնադրող զույգը ստիպված է լքել տարածքը ապրելավայրերի ոչնչացման հետևանքով, ապա մեծ հավանականությամբ այդ զույգին կարելի է կորցրած համարել՝ ազգային մակարդակում:

Մի շարք աղյուսակներում, օրինակ՝ աղյուսակներ 5.7.10, 5.7.11 և 5.7.14, բերվում են անիրատեսական և որոշ դեպքերում առնչություն չունեցող առաջարկություններ

տեսակների պահպանությանն ուղղված ակտիվ գործողությունների վերաբերյալ: Սա կրկնվում է փաստաթղթի տարբեր հատվածներում (էջ 645-647):

Ընդհանուր առմամբ, անբավարար են ուսումնասիրված ՀՀ Կարմիր գրքում գրանցված և ազգային մակարդակով կարևորություն ունեցող մի շարք տեսակներ, Ամուլսարի ծրագրի տարածքի թռչնաբանական կարևորությունը ազգային մակարդակում թերագնահատված է, բազմաթիվ տեսակների համար լրջորեն թերագնահատված է (կամ չի գնահատված) ծրագրի բացասական ազդեցությունը և չեն առաջարկված դրանց կորուստի փոխհատուցման որևէ միջոցառումներ: Հետազոտությունների արդյունքում տվյալները հաճախ սխալ են մեկնաբանվում և հաշվետվություններում և ՇՄԱԳ-ում չեն օգտագործվել կամ անտեսվել են տարբեր տեսակների մասին հրատարակված գիտական տվյալներ: Ազդեցություն կրող տեսակների պահպանությանն ուղղված առաջարկվող միջոցառումները լուրջ փորձագիտական քննարկման կարիք ունեն: Հետևաբար կենսաբազմազանության փոխհատուցման ծրագրում առաջարկվող միջոցառումները թերի են և քննարկման ու վերադիտարկման կարիք ունեն:

Ազդեցություն կրող տարածքները կենսաբազմազանության տեսանկյունից պետք է դիտարկվեն ոչ թե առանձին տեսակների առումով, այլ որպես մեկ ամբողջություն՝ կենսամիջավայր կամ էկոհամակարգ:

3. Կենսաբազմազանության փոխհատուցման ռազմավարությունում առկա են որոշակի բացթողումներ կամ թերություններ, որոնք բխում են նաև կենսաբազմազանության վերը նշված թերի ուսումնասիրություններից կամ թյուր մեկնաբանություններից:

Փաստաթղթում նշվում է “Կենսաբազմազանության փոխհատուցման միջոցառումների նպատակն է՝ չունենալ հողի վրայի կենսաբազմազանության **ոչ մի կորուստ** և նախընտրելի է ապահովել **հաշվեկշռի ավելացում**՝ տեսակների կազմի, կենսամիջավայրերի կառուցվածքի, էկոհամակարգերի գործունեության և մարդկանց կողմից օգտագործման, կենսաբազմազանությանն առնչվող մշակութային արժեքների առումով“: Նշվում է նաև, որ “Ամուլսար լեռան վրա կան ընդարձակ, բազմազան ենթալայան և լեռնային մարգագետիններ, որոնք ԿՍ6/ԿՊ6-ում սահմանված չափանիշների համաձայն համարվում են **բնական կենսամիջավայր**: Ծրագիրը **մշտական և անշրջելի ազդեցություններ** կթողնի այդ կենսամիջավայրերի վրա, որոնք առնվազն 500 հա են կազմում“:

Ակնհայտ է, որ բաց հանքի շահագործման դեպքում հնարավոր չէ ապահովել “ոչ մի կորուստ”, քանի որ ծրագրի տարածքում բնական կենսամիջավայրը ամբողջությամբ վերացվելու է: Միննույն ժամանակ ցանկացած փոխհատուցման միջոցառում, այդ թվում “Ջերմուկ” ազգային պարկի ստեղծումը, կամ որևէ այլ դեգրադացված տարածքների վերականգնումը երբևէ չեն ստեղծի այն բնական կենսամիջավայրերը

իրենց բնորոշ կենսաբազմազանությամբ և տեսակների միջև բարդ կապերով, որոնք ծրագրի իրականացման արդյունքում կկրեն “մշտական և անշրջելի ազդեցություններ”:

Փոխհատուցման ռազմավարությունում բացի “Ջերմուկ” ազգային պարկի ստեղծումը նշվում են պահպանության լրացուցիչ գործողություններ միայն գորշ արջի և տափաստանային հողմավար բազելի համար, այն էլ մեծապես ուղղված դրանց մոնիթրինգին: Ազգային պարկի ստեղծումը և նշված պահպանության լրացուցիչ գործողությունները ակնհայտորեն անբավարար են տարածքի կենսաբազմազանությանը հասցվելիք վնասի և կորուստի փոխհատուցման համար:

Ազգային պարկի ստեղծումը ինքնին ողջունելի նախաձեռնություն է, սակայն այն չի կարող փոխհատուցել Ամուլսարի ծրագրի տարածքի կենսաբազմազանության կորուստը:

Ազգային պարկի ստեղծման և գործունեության համար նախատեսվող գումարների բաշխվածությունը վերանայման կարիք ունի, բացակայում են ազգային պարկի պահպանման/բուֆերային գոտու համայնքային ծրագրերը: Ազգային պարկի ստեղծման համար նախատեսված գումարը ուրճացված է, իսկ պահպանման ծախսերը և կոնկրետ պահպանության/վերականգնման գործողությունների համար նախատեսվող գումարները շատ փոքր են: Դա հանգեցնելու է ազգային պարկի անարդյունավետ աշխատանքին և կենսաբազմազանության թերի պահպանությանը: Ընդհանուր առմամբ պահպանման ծախսերը պետք է վերահաշվարկվեն և նախատեսվեն առնվազն 10, իսկ ցանկալի է շատ ավելի երկար՝ մինչև 25 տարի ժամկետի համար:

Բնության համաշխարհային հիմնադրամի

հայաստանյան մասնաճյուղ

Տնօրեն

Կարեն Մանվելյան, կենսաբանական գիտությունների թեկնածու